



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳՍՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1900

ԹԻՒ 9

ՓԱՐԻՍԵՑԻՆ ՈՒ ՄԱԲՍԱՆՈՐԸ

Մեր ճէրոյ այս առակը չըսեր թէ փարիսեցիին անցեալին մէջ մաքսաւորէն աւելի չար մարդ մը եղած էր: Կրնանք զանիկա անկեղծ մարդ մը նկատել, և թէ՛ չէր յափշտակող, անիրաւ և կամ չնացող մէկը, և կարելի է թէ մաքսաւորը բոլոր այդ մեղքերը ունէր: Փարիսեցիին մաքսաւորէն աւելի մեծ ոճիրներ գործելը չէր պատճառը որ անոր աղօթքը չընդունուեցաւ, մինչ միւսինն ընդունուեցաւ: Պատճառն այն էր որ փարիսեցիին հըպարտ և մաքսաւորը խոնարհ էր, որ կը պարծենար և մաքսաւորը իր մեղքերը կը խոստովանէր, որ արդարանալու համար կ'ապախներ իր բարի ըլլալուն, բայց մաքսաւորը Աստուծոյ ողորմութիւնը կը խնդրէր: Ըսենք թէ միայն մէկ դեղ կայ որ կը բժշկէ հնտախտը կամ ժանտախտը:




Մարդ մը կրնայ ըսել թէ ինք չունի այսինչ մարդուն հիւանդութեան չափ սաստիկ հիւանդութիւն: Բայց եթէ աւելի հիւանդ եղող առնէ դեղը և ինք չառնէ, միւսը պիտի առողջանայ բայց իրեն ախտը պիտի սաստկանայ և ինք պիտի մեռնի: Երբ կիզիչ օձերը իւրայեղացուց բանակին մէջ էին, սրտին մտան խայթուող եթէ պղնձէ օձին նայէր, կը բժշկուէր: Բայց ան որուն փոքրիկ մատը խայթուած ըլլար և չուզէր նայիլ, կը մեռնէր: Այսպէս է բանը մեզի մեղաւորներուս համար ալ: Մեզմէ ոմանք ուրիշներէ աւելի չար

են. բայց ամէնքս ալ մեղանչած ենք: Եւ մեզքէ ազատուելու մէկ ճամբայ միայն կայ: Եւ այն է խոնարհութեամբ և անկեղծութեամբ խոստովանիլ մեր մեղքերը Աստուծոյ առջև, և զղումով և հաւատքով խնդրել անկէ որ ներքէ մեզի և մաքրէ մեզ մեղքին աւրաներէն: Փարիսեցիին կը պարծենար, լոկ անոր համար որ չէր ճանչնար ինքզինք: Նայած չէր իր ներսի դին իր սրտին՝ որ տեսներ և հասկընար թէ ո՞րչափ մեղք և ապականութիւն կային հոն որոնք պէտք էր որ ներուէին և լուացուէին ու մաքրուէին:

ԱՍՏՈՒԾՈՑ ԻՆԱՄԻՐԸ


“Բու Պահապանք չքնանայ, Սաղ. ձԻԱ. 3: Երբեմն պղտիկ տղաք կ'արթնան գիշերը, մինակ կը զգան իրենքզիրենք և քիչ մըն ալ կը վախնան: Պատճառը մուկը չէ. ինչու որ եթէ անոնց քով ուրիշներ գտնուին, և խօսին և պտըտին, երբեք հոգ չեն ըներ մութը: Բայց լուսութիւնը, տարօրինակ լուսութիւնն է պատճառը երբ ամէն ոք խորունկ քունի մէջ կ'ըլլայ: Ամէն ոք: Ոչ: Ան որ քեզ ամենէն աւելի կը սիրէ, քու վրադ կը հսկէ միշտ և հանապազ: Քեզի հոգ տանող էալը բնաւ չքնանար: “Պահա-



պանդ չքնանայ» Հոն է ան ամէն ատեն, քեզ երբեք մինակ չթողուր վայրկեան մը անգամ, երբեք մէկդի չերթար: Անոր համար տարբերութիւն չընէր մութը, ինչու որ ըսուած է, «Դաւարը և լոյսը միեւնոյն բան է քու առջիդ»: Եւ բոլոր խաւար ժամերուն մէջ կը պահէ քեզ. կը պահէ քեզ ամէն բանէ որ կրնայ ֆրասել քեզ և կամ վախցնել քեզ. ուստի կրնաս ապահովութեամբ և հանգստութեամբ քրնանալ այն անուշ քունը զոր Ան տուած է քեզի:

«Պահապանդ»: Մտածէ թէ ո՛վ է պահապանդ: Հզօր Աստուածը, որ կրնայ ընել ամէն բան և կրնայ տեսնել ամէն բան. ինչո՞ւ վախնաս քանի որ սասնկ պահապան մը ունիս: Շատ հաճելի է գիտնալ թէ ան «իբ հրեշտակներուն պիտի ապրուպըէ քեզի համար որ քեզ պահեն»: Բայց աւելի քաղցր և վստօ է մտածել թէ Աստուած ինքը կը պահէ մեզ: Եւ ուզելով որ շատ վստահ և ապահով ըլլանք այդ մասին և այլ ևս պատճառ չունենանք վախնալու, երեք անգամ կ'ըսէ նոյն խօսքը. «Քու Պահապանդ չքնանայ» «Ահա Իսրայելի Պահապանը պիտի չմտնի ու պիտի չքնանայ»: «Տէրը քու Պահապանդ է»: Ասկէ աւելի ի՞նչ կրնար ըսել:

Արդ ի՞նչ պիտի ըսես անոր երբ կ'արթննաս գիշերը և դուն քեզ մինակ կը զգաս լուսութեան մէջ: Չե՞ս միտք բերեր թէ անիկա ի՞նչպիսի բարձ մը տուած է քեզի այս գիշեր, անոր վրայ հանգչելու և ըսելու համար իրեն, «Կը վստահիմ քեզի և պիտի չվախնամ»:



ԼՃԻՆ ՎՐԱՅ ՆԱԽԱՐԿՆԵԼ

Սըր Ռուդոլֆը Սքոթ, մեծ վիպասանը, երբ Սկոթլանդ մէկ լճին վրայ կը նաւարկէր, դիտեց որ նաւաւարին թիւրքէն մէկուն վրայ «Հաւատք» գըրուած էր և միւսին վրայ «Գործք»: Հարցուց թէ ի՞նչ կը նշանակէ ատիկա: Երբուկը իբրև պատասխան՝ «Հաւատք» բառը կրող թիւն բռնեց և սկսաւ ուժով ուժով քաշել: Նաւակը անիւի պէս կը դառնար: Յետոյ թողուց այդ թիւն, և միւս թիւն, «Գործք» բառը կրողը, քաշել սկսաւ: Նաւակը նորէն դարձաւ Այնուհետեւ թէ՛ «Հաւատք»

լատք» թէ՛ «Գործք» թիւրք մէկտեղ քաշել սկսաւ, և նաւակը շտակ յառաջ գնաց:


Պէտք է որ շերմեւանդութեամբ աղօթենք Տէր Յիսուսի, և յետոյ կատարենք Աստուածային այն պատուէրները զորոնք մեր սրտին մէջ կը դնէ կատարելու համար: Մենք աղօթք կ'ընենք շատ անգամ, և պատասխանն ստանալու համար կատարուելու գործին մէջ մաս մը կ'ունենանք: Այս մասը շատ պզտիկ բան մը կրնայ ըլլալ, բայց կրնայ պէտք ըլլալ Աստուծոյ վերաբերեալ մեծ մասը հաւասարակշռելու համար: Պէտք է որ ձերունի Սկովտայիին երկու թիւրքն ալ բռնենք:

Լսէ ուրիշ աքաղաղի մը խօսիլը: Երբ կը նայիմ այս պատկերին վրայ, ուրիշ բան մը կու գայ մտքս: Շանթարգել գաւազան մը կար մեր եկեղեցիին վրայ, որուն հետ կապակցութիւն ունէր այն բանը: Եւրոպայի և Ամերիկայի մէջ օրը կէս գիշերէն կը հաշուուի: Եւ Յուլիս 4 Ամերիկացուց ազգային տօնի օրուան կէս գիշերէն սկսելով տղաք սովորութիւն ունին հրազենք արձակել, զանգակներ չալել և ուրիշ բաներ ընել տարիքոտ անձերուն քունը վրդովելու չափ: Այսպիսի գիշեր մը խուսմը մը տղաք եկեղեցին մտան պատուհաններէն և սկսան զանգակը հնչեցնել զուարթութեամբ: Շուտ ետքը լսեցին ժամկոչին ոտքերուն ձայնը որ սանդուղէն վեր կ'ելլէր: Իմ մեծ եղբայրս, որ յիշեալ տղոցմէն մէկն էր, վեր զանգակատունը վազեց և վանդակին (փարմազըզ) վրայ քայելով գետինն իջաւ շանթարգել գաւազանին վրայէն, բայց միւս տղաքը բռնուեցան: Յետոյ այն եկեղեցին վար առնուեցաւ և նոր մը շինուեցաւ անոր տեղը 1855ին ատենները: Երէցն ալ մեռաւ ասկէ 39 տարի առաջ: Հոս ցուցուած եկեղեցին իմ հայրենիքս եղող նահանգին ուրիշ մէկ գեղին եկեղեցին է:

ՄՕՐՄԷՆ ԸՆԿՈՒՆԱԾ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Հրանտ կեցաւ և նայեցաւ ժանուցումի մը վրայ թէ «Տըղայ մը կ'ուզուի»:

Դրանուցումը կտրոցներու մեծ



ՆՈՐ ԱՆԳՂՈՑ ՄԷԿ ԵԿԵՂԵՑԻՆ

Երբ ասկէ 275 տարի առաջ Միացեալ Նահանգաց հիւսիսային արևելեան մասին մէջ Անգղիայէ գաղթողներ բնակութիւն հաստատեցին, այդ մասը Նոր Անգղիա կոչեցին մայր հայրենեաց սիրոյն համար: Ամերիկայի այս մասին մէջ ծնած է այս թերթին խմբագիրը, և իր մանկութեան ատենը ամէն կիրակի կ'երթար եկեղեցի մը որ շատ կը նմանէր հոս ցուցուած եկեղեցիին: Եկեղեցիին զանգակատունը այսչափ բարակ չէր և անոր գագաթի հողմացոյցը աքաղաղի (խորոզ) ձև ունէր և հովէն կը դառնար: Եւ կը յիշեմ թէ շատ զարմացայ երբ անգամ մը ինձի ըսուեցաւ թէ աքաղաղը կը խօսի ամէն անգամ որ կը

գործարանի մը դուրսը կախուած էր վաճառատունի մը անդիլի կողմը, ուր մեծ կրակ մը պատահած էր: Հրանտ խորհած էր թէ ինք հիմա բաւական մեծցած էր և պէտք էր որ իրեն համար գործ մը փնտռէր և օգնէր իր մօրը: Ներս մտնելու էր: Առաջ վարանեցաւ քիչ մը, յետոյ բոլոր քաղութիւնը ժողովելով ներս մտաւ: Ետ ղրկուեցաւ սենեակ մը, ուր մարդիկ բարձր աթոռակներու վրայ նստած կը գրէին խոշոր տամարներու մէջ, և Հրանտի վրայ նայելու ժամանակ չունէին: Բայց բարձրահասակ մարդ մը նայեցաւ անոր վրայ, և անանկ արագ արագ հարցումներ ըրաւ աղին որ Հրանտ հաղիւ կրնար պատասխանել: Հարցուց թէ «Ի՞նչ տեսակ գործ կ'ուզես»: Չե՞ս գիտեր: Տղոց շատը գի-

տեն: Ասկէ առաջ գործած չե՞ս: Կարծեմ ասոնք ամէնը խաղաղիկ կ'երևնան քեզի: Աղէկ," սանդուղի աստիճաններ ցուցնելով, "հոն իջիր և սանդուղին ոտքը գտնուող մարդը պիտի ըսէ քեզի թէ ի՞նչ ընելու ես:"

Հրանտ վար իջաւ, և տեսաւ որ հինգ վեց տղաք կը գործէին իրենց թեղնիքները հանգրիճած (սոթթած) և գործիքներ կը մաքրէին ու կը փայլեցնէին: Սանդուղին ոտքը գտնուող մարդը վեր նայեցաւ և ըսաւ, «Եկուր մէյ մը փորձէ նայիմ: Երեք տղաք հիմա զրուելով թողուցին գործը և գացին: Ասիկա տղի գործ չերևնար, բայց պէտք է ընել: Տես," ըսաւ, քանի մը դանակներ և մկրատներ առնելով և անոնց վրայի ժանգոտած տեղերը ցուցնելով, «անցեալ գիշեր մեր շէնքը ազատող ջուրը ֆլաստեց մեր ամենէն ընտիր ապրանքներուն մէկ մասը: Եթէ կ'ուզես ասոնք մաքրելու գործը, պիտի ըսեմ քեզի կերպը: Մենք երկուստանեակի վրայ կը վճարենք:" «Աղէկ," ըսաւ տղոցմէն մէկը, «ոմանք միւսներէն աւելի շատ ժանգունին:" «Եթէ չէք ուզեր մեր պայմաններով գործել, պէտք չէ որ գործէք հոս," ըսաւ վերակացուն, և յիշեալ տղան քթին տակէն ըսելով թէ ինք աս դին անդին երթալու գործ մը կ'ուզէ, դուրս ելաւ, բայց Հրանտ յօժարու թիւնով սկսաւ գործին: Քանի կը լմնցնէր ամէն մէկ կտորը, կը վերցնէր կը քնէր ու շաղրու թեամբ, և կ'ըսէր ինքնիրեն թէ արդեօք մայրը պիտի հաւնէր իր մաքրածին: Երբ արձակման ժամը եկաւ, Հրանտը վար զրկող մարդը երևցաւ, և չորս կողմ տղոցը վրայ նայելով ըսաւ, «Ի՞նչպէս եղաւ," «Ո՛հ մեր ուզած տղան," ըսաւ վերակացուն, Հրանտը ցուցնելով, «ոնէ գործ յօժարութեամբ կը կատարէ: Աղէկ կը թու թիւն առած է:" Երբէն խօսեցաւ բարձրահասակ մարդը արագ արագ. «Մեր ուղածն ալ ատ է: Երբ կ'ըսենք 'Տղայ մը կ'ուզուի,' ըսել չէ ոնէ տղայ: Մայրդ գիտե՞ քու գալը: Չը՞ գիտեր: Ուրեմն առաջին վարձքդ անոր տար, և ըսէ թէ քեզի համար բաց տեղ մը կայ հոս: Անկէ ետև բազուկներդ անոր պարանոցին բարձրիքը դիր և շնորհակալ եղիր քեզ լաւ կը թելուն համար: Եթէ աւելի տղաք լաւ կը թուած ըլլային, աւելի տղաք պիտի յաճողէին կեանքի մէջ:"

«Կարծեմ թէ, մայր," ըսաւ Հրանտ երբ անոր պատմեց այս բաները,

«պատճառն այն էր որ ես կը ջանայի ամէն բան քու ուզածիդ պէս ընել: Մոռցայ թէ այն գործը կ'ընէի ինչու որ տղայ մը կ'ուզուէր:"



ՊԱՏ. ԱՂԵՔՍԱՆԻՐ Հ. ՃԵՃԻՉԵԱՆ
Հանդուցեալ Պատ. Աղեքսանդր Հ. Ճէճիչեանի պատկերը հոս կը գնենք, բայց ոչ կենսագրութիւնը որ արդէն համառօտիւ դրուած է այս տարուան 34 թիւ շաբաթական Աւետիքին մէջ:

ՔԱՆՆ՝ ՏԱՐԵԿԱՆ ԷՔ

Օր մը իշխանի մը ատենը ներկայացաւ արևոր (ճերմակ մազերով) փրօֆէսոր մը, որ շատ զուարճացուց իշխանը: Իշխանին պատմեց շատ մը բաներ զորոնք երբեք չէր գիտեր անիկա, և իշխանը շատ հաճոյք զգաց: Բայց վերջապէս խօսքն այն պիտի կէտի մը եկաւ որ իշխանը ուղեց իմանալ փրօֆէսորին տարիքը: Ուստի մաթեմատիքական խնդիր մը բերաւ միտքը:

«Ես հետաքրքրական հաշիւ մը ունիմ ձեզի համար," ըսաւ իշխանը, «մտաւորական թուաբանութեան կը վերաբերի: Խորհեցէք ձեր ծննդեան ամսուն վրայ," փրօֆէսորը 60 տարեկան էր, և Ծննդեան տօնէն երկու օր առաջ ծնած էր, ուստի 12ի վրայ մտածեց, վասն զի Դեկտեմբերը, որուն մէջ Եւրոպայուց Ծնունդը կու գայ, տասներկուերորդ ամիսն է:

«Խորհեցայ," ըսաւ փրօֆէսորը: «Բազմապատկէ ատիկա երկուքով," շարունակեց իշխանը: «Բազմապատկեցի:" «Հինգ գումարէ արտադրեալին վրայ:" «Գումարեցի," պատասխանեց փրօֆէսորը: «Հիմա բազմապատկէ գումարը 30ով:" «Բազմապատկեցի:" «Վրան աւելցուր տարի-

քը:" «Աւելցուցի:" «Հանէ 365:" «Հանեցի:" «Գումարէ 115:" «Գումարեցի:" «Հիմա," ըսաւ իշխանը, «կրնամ հարցնել թէ ի՞նչ եղաւ արդիւնքը:" «Հազար երկու հարիւր վաթսուն," պատասխանեց փրօֆէսորը զարմացած: «Ծնորհակալ եմ," պատասխանեց իշխանը: «Ուրեմն դուք ծնաք Դեկտեմբեր ամսուն, ասկէ 60 տարի առաջ:" «Այս ի՞նչպէս կրնայ ըլլալ որ կը գիտնաք," գոչեց փրօֆէսորը: «Չեր 1260 պատասխանէն: Չեր ծննդեան ամիսը տասներկուերորդ ամիսն էր, և վերջին երկու թուանը շանները ձեր տարիքը կը ցուցնեն:" «Հա, հա, հա," խնդաց փրօֆէսորը: «Չարմանալի՛ բան: Ես պիտի փորձեմ առաջին պատահող անձին վրայ: Մարդոց տարիքն իմանալու քաղաքավար կերպ մըն է ատիկա:"

ՄՕՐ ՄԸ ՊԱՏԿԵՐԸ

Աղքատ կին մը իր միակ դուստրը կորսնցուց Լոնտոնի կեանքին չար մտրութիւններուն մէջ: Աղջիկը թողուց մաքուր տունը և գնաց ընկղմիլ ամէն կերպ մտրութեան և թշուառութեան մէջ: Մայրը կտորած սրտով գնաց Տր. Պարնարտոյի, պատմեց բանը և ըսաւ թէ արդեօք չէ՞ր կրնար օգնել կորսուածը գտնելու: «Այո, կրնամ," ըսաւ Տրքութորը, «ձեր լուսանկարը հանել տուէք, և անոնցմէ բաւական օրինակներ չրջանակներու մէջ դրէք, պատկերին ներքեւ գրեցէք 'Տուն եկուր,' և ինծի զրկեցէք պատկերները:"

Տրքութորը լուսանկարները զրկեց գինեատունները, պարի սրահները և ուրիշ տեղեր ուր անպիտաններ և անուսակներ կը յաճախեն, և զանոնք կախել տուաւ աչքի զարնող տեղեր: Գիշեր մը մինչ աղջիկը քանի մը մեղսակից ընկերներու հետ կը մտնէր այս ամբարշտութեան որջերէն մէկուն մէջ, իր մօրը պատկերը տեսաւ: Ապշու թեամբ զարնուած՝ մօտէն նայեցաւ անոր վրայ և տեսաւ հրաւերը, «Տուն եկուր," գրուած անոր տակը: Որո՞ւ կ'ուղղուէր այդ հրաւերը: Իրե՞ն: Այո: Ատկէ հասկցաւ թէ ներում ընդունած էր, և այդ նոյն գիշերը վերադարձաւ իր մօր բազուկներուն ճիշդ ինչպէս որ էր:

Այս է Աստուծոյ սիրոյ աղաղակը ամէն մոլորեալի, «Տուն եկուր," և ամէն անոնք որ ուրախութեամբ կը ըսեն և կ'երթան, սիրալիր ընդունելութիւն կը գտնեն ամենաքաղցր թողութիւն ստանալով մէկտեղ:

«ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՏԵՂ ԶԳՏԱՆ»

Երբ Եսաւ կերակուրի մը համար իր անդրանկութիւնը ծախեց, շուտով զՂոաց իր յիմարական առուտուրին համար և շատ ջանք ըրաւ իր կորուստը տեղը բերելու: Բայց ա՛լ ուշ էր: Ապաշխարութեան տեղ չգտաւ, ոչ ալ իր ըրած առուտուրը փոխելու կերպ մը: Այսպէս ալ մինչ մեղաւորին համար ապաշխարելու և քրիստոսի գալու պատենութիւն կայ, շատ պարագաներու մէջ երբ ծուռ գործեր կը գործուին և ծուռ քայլեր կ'առնուին, ծուռ գործերուն հետեւանքներէն ազատուելու կերպ չկայ: Կրնանք ցաւիլ, կրնանք ողբալ, կըրնանք յանդիմանել մեղադրել մեր անձերը, բայց բոլոր ասոնք օգուտ մը չեն ըներ: Մարդ մը որ վատնած է իր ստացուածքը, չկրնար ետ բերել զանկալ արցունքներով: Եղայ մը որ իր տեղը կորսնցուցած է անհոգութիւնով, զանցառութիւնով կամ անհնազանդութիւնով, կրնայ շատ ցաւիլ, բայց երբեք չկրնար նորէն ձեռք բերել իր կորուստը: Ան որ իր առողջութիւնը կործանած է անհոգութեամբ կամ մոլութիւնով, կրնայ ապաշխարել փոշիի և մոխրի վրայ և ողբալ կոծել իր յիմարութեանը վրայ, բայց տակաւին պիտի տառապի և մեռնի: Նմանապէս մենք ալ պէտք է ակնկալենք մեր գործերուն հետեւանքները կրել: Եթէ ծուռ գործներ, այդ ծուռ գործը շատ անգամ մեզի կը բերէ ամօթ և տառապանք: Եթէ պէտք վերջապէս ներում և փրկութիւն ստանանք, բայց հոս այս աշխարհին մէջ պէտք է ակնկալենք մեր ըրած ծուռ գործերուն հետեւանքը կրել, և տոկալ նեղութեան և նախատինքին զորոնք մեր վրայ կը բերենք: Որչափ աւելի աղէկ է զգուշանալ այսպիսի ծուռ գործերէ, և միշտ ջանալ նեղ ճամբուն մէջ քայլելու:

ԱՆՈՒՇԻԿ ԽՕՍԷ

Օրիորդ մը տնէն դուրս պտոյտի ելած ատեն մոռցած էր հետ առնել ստակին քսակը: Եւ ահա պզտիկ աղջիկ մը պատահեցաւ որ իր ձեռքը կողով մը ունէր: Ինքը վտիտ, տժգոյն և մաշած բան մըն էր: «Հաճեցէք, օրիորդ, բան մը գնել կողովէս», ըսաւ աղջիկը, ցուցնելով տեսակ տեսակ պատկերներ, ժամացոյցի ամաններ, ասեղնոցներ, ևն.: «Կը ցաւիմ որ բան մը պիտի չկրնամ գնել այսօր», ըսաւ օրիորդը, «ինչու որ վրաս

տակ չունիմ. քու բաներդ շատ աղուոր և գեղեցիկ կ'երևնան»: Օրիորդը կեցաւ վայրկեան մը և քանի մը քաղցր խօսքեր խօսեցաւ աղջկան, յետոյ քալեց և նորէն ըսաւ, «Շատ կը ցաւիմ որ այսօր բան մը չեմ կրնար առնել քեզմէ»: «Ի՛հ, օրիորդ», ըսաւ փոքրիկ աղջիկը, «ինձի բան ծախու առած ըլլալու չափ բարիք ըրիք: Շատեր որոնց կը պատահիմ, «Բանդ գնա՛ր» ըսելով կը վճնտեն զիս, բայց դուք քաղցրութեամբ խօսեցաք ինձի հետ, և ես շատ գոհ եղայ»:

Օրիորդին այս վարմունքը աղքատին հոգ տանիլ էր: Որչափ քիչ դժուարութիւն կայ անոյ խօսքեր խօսելուն մէջ, և որչափ մեծ արժէք ունին անոնք: Եթէ տալու ուրիշ բան չունինք, գէթ սէր և համակրութիւն տանք:

ԹՈՒՌԹԻԿ ՄԸ

Գաղղիոյ Բաթօ քաղաքէն տասներեք տարեկան տղայ մը երբ թուրքի կը թուցնէր, վտանգաւոր արկածի մը պատահեցաւ: Թուրքիկը որ քսանըօթը մատնաչափ երկայնութիւն ունէր, շատ բարձրացած էր, և ահա փոթորիկի և որսաման նշաններ տեսնուեցան: Տղան իսկոյն ժողովել սկսաւ թուրքիկին լարը: Բայց թուրքիկը տակաւին հարիւր եարտայի չափ բարձր էր գետնէն երբ փայլակի փայլուն բոց մը ելաւ: Մանուկ ժանթի օդին մէջ նետուեցաւ, երկու երեք անգամ գլխովայր դարձաւ և տաք տասներկու ոտք անդին ինկաւ: Թուրքիկը իրեն քաշած էր ելեկտրական հեղուկը, որ լարին միջոցով վար իջած էր, ինչպէս եղաւ Ֆրանքլինի համբաւեալ փորձին մէջ, և գետին իջած էր տղին մարմնին միջոցովը: Չարմանալի է որ տղան չսպանուեցաւ: Քիչ մը ետքը ելաւ ու տուն գնաց դողալով և լալով: Չախ ձեռքով բռնած էր լարը, և այդ ձեռքին երունգները կապուտցած էին իբր թէ սոսկալի ճնշման մը տակ, իսկ մատները այրուած և բշտիկներով պատած էին: Ասկէ զատ տղին երեսն ալ բաւական ճամբուած էր ինչպէս շամար: Թուրքիկին լարը այրուած և փրթած էր և թուրքիկը թռած գացած էր անձանօթ կողմ մը:

ԱՌՆԷՏՆԵՐԸ ԵՒ ՀՐԳԵՀՆԵՐԸ

Պոսթընի մէջ հրդեհի ապահովագրական ընկերութիւն մը մտերս շահեկան քննութիւն մը ըրաւ հասկնալու համար թէ հիմ ունի հանրութեան կարծիքը թէ առնէտներ և մուկեր

հրդեհի պատճառ կ'ըլլան լուցկիներ կրծելով: Երեք ամիս փորձ կատարուեցաւ: Առնէտներ և մուկեր, մինակ կամ քանի մը հատը մէկանց, բանտարկուեցան խոյր երկաթ սնուակներու մէջ որ տեսակ տեսակ լուցկիներ եւ բամբակ կը պարունակէին: Մուկերը, թէպէտ շատ անօթի էին, երբեք չկրծեցին լուցկիները, բայց առնէտները քանի մը հրդեհներ բռնկցուցին, ամէն անգամուն ծծումբով չինուած լուցկիներու միջոցով: Այսուհետեւ երբ մուկերու միջոցով պատահած հրդեհներու վրայ խօսուի, այս ապահովագրական ընկերութեան պաշտօնները շատ հաւանական է թէ «մուկ» բառին տեղը «առնէտ» բառը պիտի գործածեն:

ՅՈՒՒՍԻ ՀԱՆՆԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Մահը ու կեանքը լեզուին ձեռքն է, և զանկալ սիրողները սնոր պտուղը կ'ուտեն: Առակ ժԸ. 21:

Բանալի եղող բառերն են,

Լեզու, Հատուց, Մոգութ, Կեներ, Տեգու:

Լուծեցին, Կ. պղտ. — Մկրտիչ Ս. Պայտան, Անտոնի Ս. Թիմուրեան, Վահան Ճ. Թովմասեան, Ե. Ս. Գարբէլեան, Պ. Յ. Մերկելամ, Արտաշէս Գ. Գուշտուրաճեան, Ղազարոս Գ. Գուշտուրաճեան: Պարտիզակ. — Աննայ Ե. Կարապետեան, Եղիազար Ե. Կարապետեան: Չիւրախ. — Նուարթ (Թաշճեան, Գերմանական Որբանոցէն չորս աշակերտուհիներ. Մարիամ Եւրոպեան, Եսթեր Յակոբեան, Պելլիւ-Տէվէճեան, Եսթեր Կիւտիւնեան: Թալաս. — Բարսեղ Տէր Բարսեղեան: Եւր-Գըշտ. — Միսաք Ե. Պաշտուրեան, Գրեգոր Ճըլեան, Պետրոս Պ. Սըվաթեան: Երզրատ. — Մաքրուհի Մ. Գալուստեան: Տէրապետք. — Յովհաննէս Միթէվէլեան: — Եփրատ Տէտեան, Հրանտ Էթմէքճեան:

ՀԱՆՆԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԷՆ

0	0
0	0
0	0
0	0
0	0
0	0
0	0
0	0

1. Դաւիթի որդիներէն մին, 2. Ահարոնի որդիներէն մին. 3. Պողոս առաքելին գպիւրը. 4. Քաղաք մը ուր փրկիպոս քարոզեց. 5. Արեան ստակի թիւը (աղէն ձախ). 6. Չարագործ մը որ ազատ արձակուեցաւ (աղէն ձախ). 7. Գահանայ մը:

Նշանակեալ անունները, եթէ վերը քառասունին նման շարեւ, ձախակողմեան գերոնքը վերէն վար պիտի կարգաւ մարդոց մեծ թշնամին մէկ անունը, իսկ աշակողմեան վարէն վեր պիտի կարգաւ զատուորաց մէկուն անունը:

ՍԵՐԱՅ ԵՎ ՊԱՐԱՅԱՆ

Յոսիպի Եւստիմիոսի 6 դահ. արծաթ, կանխիկ վճարով չափազանց համար:

Ամենայն Միջերկրաց ընկերութեան կողմէն

Պոստընի մէջ Զ. Ք. ԿՐԻՆ

Տէրապետք Զ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿԱՅԻՆՆԵՐԻ ՈՒՊՈՒԼԻՍ

Ի ՏԳԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒ ՊՕՍԱՅԱՆ

Ճիւղանքը Երզրատ, Ամերիկան Խան